


ՀԻՒՆԵՐ ԽՆԱՄԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ

ԱՐԻՒՆ ԱՌՆԵԼ ԵՒ ՏՋՐՈՒԿ ԴՆԵԼ

Երկու տեսակ արիւն առնել կայ. ընդհանուր և տեղական. ընդհանուր արիւն առնելուն նպատակն է մարդու մարմին մէջ դիզուած արեան քանակութիւնը քիչցնել, բազկերակին վրայ նշգրակը դպցնելով:

Դործողութենէն առաջ ձեռքի տակ պատրաստ գտնուելու են՝



Սպրուկին խայթումք (1) և անոր թողած սպիւն (3):

Նշգրակ մը, արիւնը մէջը վազցնելու կոնք մը, կտաւէ կապ մը, բարակ պատտառէ կապ մը, հականեխուած բամպակ և այլ կապեր: Պատրաստ գտնուելու են նաեւ ձեռք լուալու համար պէտք եղած նիւթերը, և ալքօլ ու եթէր: Հիւանդին անկողինն ու գետինը պէտք է ծածկել սաւառններով:

Տեղական արիւն առնելուն նպատակն է մարդու մարմինն որոշ մէկ մասին արիւնը հանել և հանգարտեցնել: Ատոր համար կ'մտադրուկ կը փակցնեն կամ նշգրակաւոր ապիկի կը գործածեն:

Տգրուկը (սիւլիւկ), ինչպէս յայտնի է, փոքր երկայն կենդանի մըն է, որուն երկու ծայրերն ալ տափակ են: Լկյա ծայրերէն մէկը՝ որ բարակ է, բերանն է, որով կը ծծէ արիւնը: Ասիկա կարեւոր է գիտնալ, որովհետեւ ա՛յս կողմն է որ պիտի փակցուի պէտք եղած տեղը:

Տգրուկը դնելու համար պէտք է նախապէս հիւանդին արիւն առնուելիք մասը եռացած ջուրով ու օճառով լուալ: Եթէ այնտեղ մազ բուսած է, պէտք է ածիլել: Օճառի հետքը բոլորովին անհետացնելու է, նոյն տեղը նորէն լուալու է եռացած ջուրով: Յետոյ նոյն ջուրը թաթխած բամպակով քիչ մը չփելու է, որպէսզի կարմրի: Ասկէ ետք տգրուկը մաքուր պաստառով մը սրբելով փոքրիկ գաւաթի մը մէջ կը դրուի, և զայն պէտք եղած տեղին վրայ գլխովայր կը դարձուի:

Եթէ տգրուկ փակցուելիք տեղը շատ նեղ է, այն ատեն տգրուկը ապակիէ նեղ խողովակի մը մէջ կը դրուի, կամ մաքուր բարակ խաւաքարտէ ձագար մը շինելով մէջը կը դրուի, և պէտք եղած տեղը կը փակցուի:

Տգրուկի մը ծծելը՝ 3 քառսրդ ժամէն մինչև երկու ժամ կը տեւէ: Միջին հասակով տգրուկ մը 15 կրամ արիւն կը ծծէ. բայց տգրուկին իյնալէն վերջ՝ արիւնը կը շարունակուի հոսիլ դեռ երկար ժամանակ: Այս արիւնը դադրեցնելու համար մաքուր պաստառով մը ամուր մը կը փաթթեն վերքը:

Տգրուկները երբ յագենան, ինքնիրեննին կ'իյնան. իսկ երբոր չիյնան, այն ատեն վրանին հասարակ աղ ցանելու է, որպէսզի խածածինն թողուն:

Տգրուկին փակցուած տեղը ճերմակ սպի մը կը մնայ. ուստի՝ պէտք չէ դէմքին կամ թեւերուն վրայ տգրուկ դնել:

Տգրուկը փակցնելէ ետք վրան հոկելու է, որպէսզի չտեղափոխուի և մարմնին ծակերէն մէկուն մէջ չփախի: Փակցուելիք տեղերն են՝ սրբանի բոլորտիքը, ականջի ետին (հայերէն ականջթոռք), զիստերուն ներքին կողմը, եւայլն:

Հաւաքեց՝ Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ

ՄԵՂՈՒՆԵՐՄԻՆ ԹՈՅՆԸ ... ԴԵՂ. — Փորձով տեսնուած էր, որ մեղուններուն կողմէ խայթուած մարդոց յօդացաւը կ'անհետանար: Վերջերս գերմանական հաստատութիւն մը մեղուններու թոյնէն պատրաստած է դեղ մը, ափիքողան, յստակ հեղուկ մը, թթու եւ լեղի, որ ներարկուելով կը փարատէ կ'ըսուի, ջղացաւերն ու յօդացաւերը: